

ՀՏԴ 371.31:809.198.1

Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա

**ՀԱՐԱՆՈՒՆԵՐՈՒ ԵՎ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ  
(ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ)**

Ծ.Ա. Հասարայան

Գեղեցիկ, կուռ, գրագետ խոսք ունենալու համար յուրաքանչյուր որ պետք է լավ տիրապետի իր մայրենի լեզվին, կարողանա օգտվել նրա ճղխ բառապաշարից: Այս կարգավիճակում էլ ուսուցիչը պետք է սովորողների մեջ սերմանի մայրենիի նկատմամբ ավելի զգոն վերաբերմունք, հետաքրքրություն, սովորելու անհագ ցանկություն: Փորձենք լուսաբանել մի շատ հետաքրքիր ու ինչ որ տեղ աշակերտների համար դժվարընկալելի թեմա՝ հայերենի հարանունները: Թեպետ թեման թե՛ որպես ծրագրային նյութ, թե՛ իբրև լեզվական իրողություն միջին օղակի դասագրքերում տեղ չի գտնում, սակայն դեռ կրտսեր դպրոցից աշակերտները բազմիցս հանդիպում են այնպիսի բառերի, որոնք ուսուցչի կողմից պարզապես բացատրվում են՝ նշվում իմաստները, ուղղագրությունը՝ առանց «հարանուններ» տերմինն օգտագործելու: Ըստ իս՝ արժե, որ հիմնական դպրոցում նման բառերի հանդիպելիս ուսուցիչը տա անհրաժեշտ տեղեկություն, բացատրություն հարանունների մասին: Հայերենը հարուստ է հարանուններով և չիմանալով դրանց իմաստաբանական տարբերությունները՝ աշակերտները դրանք խոսքում ճիշտ չեն գործածում, որից էլ տուժում է նրանց և՛ բանավոր և՛ գրավոր խոսքը:

Սույն հոդվածի նպատակն է սովորողներին ներկայացնել մեր ոսկեդարիկ հայերենի հարանուններից, շեշտը դնել դրանց ճիշտ ընկալման և խոսքում ճիշտ գործածության վրա՝ ցույց տալով, թե որքանով են դրանք նպաստում բառապաշարի հարստացմանը:

Խնդիրն այն է, որ աշակերտները դրանց մասին շատ քիչ տեղեկություններ ունեն, որն էլ և պատճառ է բազմաթիվ սխալների: Այնինչ, ամեն մի անծանոթ բառի հանդիպելիս նրանք պետք է հստակորեն տարբերակեն, թե՛ տվյալ բառի իմաստը, թե՛ ճիշտ գրությունը. այդ գործում նրանց պետք է օգնի ուսուցիչը:

Կարծում ենք՝ 6-րդ դասարանում «Բառերի տեսակներն ըստ ձևի և իմաստի» թեման անցնելուց հետո նպատակահարմար է անդրադառնալ նաև հարանուններին (լայն առումով) :

Բնավ այն մտքին չենք, որ պետական ծրագրում կան թերացումներ այս կամ այն թեման չընդգրկելու հարցում և որ 6-րդ դասարանում հարանուններ թեման պիտի ուսուցանվի հանգամանորեն: Պարզապես այն կարծիքին ենք, որ դասագրքերում գործածված հարանունները պետք է պատշաճ ձևով բացատրվեն, քանի որ շատ հաճախ աշակերտներին շփոթության մեջ է գցում բառերի հնչյունական նմանությունը, և շատ սխալներ թույլ են տրվում նման բառերի բառիմաստները չհասկանալու հետևանքով: Ուրեմն՝ հարանունների ուսուցումը 6-րդ դասարանում պետք է համարել անհրաժեշտություն:

Թեմայի ուսուցումն ունի և՛ տեսական, և՛ գործնական նշանակություն: Մինչդեռ միայն տեսականորեն ներկայացնել թեման և այն չկիրառել գործնականում, չի նշանակում, թե աշակերտներն ունեն համապատասխան գիտելիքներ և գրագետ ու հարուստ խոսք կազմելու կարողություններ:

Համաձայն ՀՀ «կրթակարգի», հանրակրթության պետական առարկայական չափորոշչի և միջին դպրոցի հայոց լեզվի ծրագրի՝ 5-ից 6-րդ դասարաններում ուսուցումը պետք է կրի գործնական բնույթ, ունենա լեզվական կարողությունների ձևեր բերման միտում:(1, էջ 3) Ելնելով այս նպատակից՝ «Հարանուններ» թեմայի ուսուցումը, գործնական կիրառությունը հենց կնպաստի այդ բառերի թե՛ իմաստների, թե՛ ուղղագրության յուրացմանը:

Հակառակ դեպքում, եթե ուսուցչի կողմից չտրվի նորածանոթ բառերի բացատրությունները, առանձին - առանձին դրանք չօգտագործվեն բառակապակցության կամ նախադասության մեջ, ապա բնական է, որ աշակերտներն այդ բառերում թույլ կտան ուղղագրական սխալներ:

Այդ նպատակով պետք է նախապես որոշ համակարգով կազմել ուղղագրական դժվարություններ ունեցող հարանունների ցուցակը, այնուհետև բացատրել դրանց իմաստները և կատարել բազմակողմանի վերլուծություններ, քանի որ դրանք խիստ կարևոր են և՛ սովորողների բառապաշարը հարստացնելու, և՛ նրանց ձևեր բերած գիտելիքները խորացնելու առումով: Այդ ամենից հետո ստուգման նպատակով անհրաժեշտ է առանձին կազմակերպել բառալսման թելադրություն: Այդպիսի թելադրությունները հետապնդում են հետևյալ նպատակները՝

ուղղագրական գիտելիքների հարստացում ու ամրապնդում, բառապաշարի համալրում և հարստացում և այդ ամենը գործնականում կիրառելի կարողությունների մշակում:

Ուրեմն՝ աներկբա կարող ենք նշել, որ սովորողների ուղղագրական գիտելիքների հարստացման ու ամրապնդման, նրանց բառապաշարի հարստացման և խոսքի զարգացման գործում հսկայական նշանակություն ունեն նաև հարանունները:

Փորձենք նշել, թե ինչպես կարելի է միջին դպրոցում մատուցել այդ ոչ ծրագրային նյութը՝ չանտեսելով այն փաստը, որ ամեն ինչ պետք է արվի ելնելով դիդակտիկայի մի շարք սկզբունքներից:

Աշակերտներին պետք է բացատրել, որ թեկուզ «հարանունը» որպես լեզվական իրողություն դասագրքում տեղ չի գտել, սակայն դա չի նշանակում, թե հարանունները լեզվաբանության մեջ անտեսվում են: Դեռ ավելին, հարանուններն իրենց ուրույն տեղն ու նշանակությունն ունեն արդի հայերենում: Այնուհետև հաղորդվող տարրական գիտելիքներն աստիճանաբար զարգացնել և հասցնել աշակերտների ունեցած մակարդակին: Ամեն ինչ պետք է սկսել նրանից, թե ինչ ենք հասկանում հարանուններ ասելով: Կարելի է զուգահեռներ անցկացնել իրենց արդեն իսկ ծանոթ հոմանիշ, հակահիշ, համանուն բառերի հետ և նույն կերպ, բառակազմական վերլուծության ենթարկել «հար, կից» + «անուն», հետո բացատրել հարանուն բառի իմաստը, հարանուն-հարմար՝ համապատասխան անուն, նմանահունչ բառեր: Թեման պետք է սկսել հարանունների սահմանման բացատրությունից. հարանունները, լայն առումով, այն բառերն են, որոնք նման են հնչյունական կազմով: (2, էջ 65) Բնավ նպատակ չունենք անդրադառնալու հարանունների ձևային և ձևաիմաստային տեսակներին: Ավելի պարզ կլինի, եթե տրվի բերված օրինակների արտահայտած իմաստները, այսպես՝ ապրանք - ունեցվածք, սեփականություն, ապարանք - պալատ, դղյակ, շքեղ տուն: Ավանդույթ - սերնդներունդ փոխանցված արարողություն՝ ծես, ավանդություն - սովորույթ, պատմություն, գրույց: Արհեստ-ձեռքի մանր աշխատանք, զբաղմունք, գործ, արվեստ - ստեղծագործական գեղարվեստական գործունեության բնագավառ: Ձորավար - հրամանատար, սպարապետ, զորավոր- զորեղ, ուժեղ և այլն: Կարելի է նաև հպանցիկ ներկայացնել հարանունների այլ դրսևորումների մասին, այսպես՝ կան այնպիսի հարանուններ, որոնք նույն կամ մոտ իմաստներն են արտահայտում օր-կ' շուրթ - շրթունք, դարձված - դարձվածք, գով - հով և այլն:

Կամ՝ արտահայտում են ինչ-ինչ թվերով իրար հետ հարաբերակցվող իմաստներ օր-կ' հնչյուն-հնչուն, կարկաչյուն-կարկաչուն, ուսում-ուսմունք, հրածիզ-հրձիզ և այլն: (3, էջ 120)

Ավելորդ չձանրաբեռնելու, թեմայի յուրացումը խթանի չդարձնելու համար կարելի է բավարարվել այսքանով, հաշվի առնելով այն փաստը, որ հարանուններն ավելի խորացված ու ծավալված անցնելու են ավագ դպրոցի 10-րդ դասարանում: Սակայն, որքան ճիշտ ու կայուն են դրվում հիմքերը, այնքան ավելի հեշտ է լինում սկսածը շարունակել, խորացնել, ծավալել: Ի տարբերություն հիմնական դպրոցի՝ ավագ դպրոցի 10-րդ դասարանում հարանուններ թեմային պետական ծրագրով հատկացված է ժամաքանակ. տեսական նյութին հաջորդում են գործնական բնույթի աշխատանքներ: Ուսուցումը հաջող և արդյունավետ կազմակերպելու համար կարևոր է նկատի ունենալ նաև սովորողների գիտելիքների մակարդակը, տարիքային առանձնահատկությունները:

Պակաս կարևոր չեն նաև մեթոդական հնարներն ու վարժությունները: Վարժություններն ընտրելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի այն, որ առաջադրված վարժությունները աշակերտներին մղեն ինքնուրույն աշխատանքի: Հատկապես ցանկալի է ընտրել պրոբլեմային վարժություններ, որոնք կստիպեն ինքնուրույն որոնելու, գտնելու, մտածելու, դատելու: Ուսուցչի կողմից առաջադրված թե՛ վարժությունները, թե՛ հարցադրումները աշակերտների մոտ պետք է հանգեցնեն մտազորի:

Սովորածը կրկնելու և ամրակայելու համար կարևոր խթան է նաև նպատակային տնային ախտանքների հանձնարարումը: Ճանաչողական և կիրառական բնույթի աշխատանքները կզարգացնեն նրանց ինքնուրույնությունը, կստիպեն հերթական անգամ անդրադառնալու տվյալ թեմայի կարևորությանը: Արդյունավետ կլինի նաև բանավոր տնային աշխատանքների հանձնարարումը, երբ վաղօրոք կազմված բառացանկը պահանջվում է անգիր սովորել: Վերոնշյալների հաջող կատարումն էլ երաշխիքն է աշակերտի խոսքի զարգացմանն ու հարստացմանը:

Մանկավարժական փորձը ցույց է տալիս, որ թե՛ տեսական նյութի և թե՛ վարժությունների աստիճանական դժվարացումն ու բարդացումը հնարավորություն է տալիս լեզվական երևույթները դիտարկել բազմակողմանի, աշակերտներին ստիպում է դրանց նկատմամբ ակտիվություն և ինքնուրույնություն ցուցաբերել:

Ինչպես արդեն նշեցինք, միջին օղակում դպրոցական ծրագրով չի նախատեսվում այդ թեմայի ուսուցումը, ուստի ուսուցիչների համար բավական դժվար կլինի կազմակերպել հարանունների ուսուցումը, նամանավանդ, առաջադրանքներն ընտրելիս: Նախ՝ ուսուցիչը պետք է կարողանա մեթոդապես ճիշտ իրականացնի ոչ ծրագրային նյութի մատուցումը, այնուհետև ընտրի և՛

բառապաշարի հարստացմանն ու խոսքի զարգացմանը միտված, և՛ նյութը գործնականում կիրառելու բազմազան առաջադրանքներ: Պետք է աշխատել առաջադրանքներն ընտրել ինչպես գեղարվեստական գրականությունից, այնպես էլ ինքնուրույն կազմած նախադասություններից, տնքստնքից:

Հարանունների կհանդիպեն նաև գրականության դասերն անցնելիս: Այդ հնարավորությունը չպետք է բաց թողնել ևս մեկ անգամ կրկնելու և խորացնելու թեմայի իմացությունը՝ ապահովելով միջառարկայական կապը: Կարելի է գրականության թեմաներին հատկացված դասաժամերից վերջինը տրամադրել բանավոր խոսքի զարգացմանը՝ քննարկվելիք աշխատանքներն իրագործելու համար, իսկ ժամաքանակը քիչ լինելու դեպքում՝ ընթացքում: Եթե սովորողների հետ, սկսած կրտսեր դասարանից, հետևողական և ծրագրային աշխատանք տարվի, ապա արդյունքներն, անշուշտ, անհամեմատ գոհացուցիչ կլինեն: Տեսականորեն որոշ բացատրություններ, սահմանումներ տալուց հետո, պարզ պատկերացում կազմելու համար, թե ինչ նշանակություն ունի հարանունների գործածությունը խոսքի մեջ, անհրաժեշտ է վերլուծել մի շարք հարանուններ:

Ահավասիկ, դժվար կլինի մեկ դասաժամ հատկացնել և կատարել նշված բոլոր պահանջները, այդ իսկ պատճառով ուսուցիչը պետք է պատեհ առիթը բաց չթողնի և ամեն անգամ նմանատիպ բառերի հանդիպելիս տա անհրաժեշտ տեղեկություններ, քանի որ այդ պահանջը կզգացվի ուսուցման ողջ ընթացքում: Կամ էլ հատուկ ուշադրություն դարձնել գրականության նյութերում կարմիր և կապույտ գույնով գրված բառերին, բացի պահանջվող աշխատանքները կատարելուց, կատարել նաև հետևյալը՝ ընտրել այն բառերը, որոնք ունեն հնչմամբ իրար մոտ, իմաստով առնչակից բառեր, որն էլ շատ հաճախ աշակերտները խոսքի մեջ շփոթում են՝ չտարբերելով իրարից: Սակայն չպետք է անցնել 6-րդ դասարանի համար նախատեսված բառակազմի սահմանը, հակառակ դեպքում ավելի կբարդացնենք ուսուցումը և սովորողների գիտակցությանը անհասանելի կլինի դժվար ու անձանոթ բառերի ընկալումն ու մտապահումը: Բերենք մի քանի օրինակ. 6-րդ դասարանում մայրենիից Վոլտերի «Արդար վճիռ» դասն անցնելիս բացատրել վաճառական - վճռական, վաճառել - վճարել - վճռել բառերի իմաստները, նշել, որ այդպիսի բառերը հայերենում կոչվում են հարանուններ: Կամ՝ Պարույր Սևակի «Էրեբունի-Երեվան» բանաստեղծությունում հորով-մորով, կանչեր-տենչեր, կանչ-տենչ, քարերի-դարերի բառերը, Հ. Սահյանի «Երեվան» բանաստեղծությունում լորս-ձորս, քնարս-հնարս, հողս-տողս, լորքս-ցնորքս բառերը: (4, էջ 57, 152 և 153) Եթե կարիք կա անդրադառնալու ընդգծված բառերի ուղղագրությանն, ապա անպայման պետք է բացատրել նաև դրանց ճիշտ գրությունը: Ահա այս եղանակով էլ կարելի է անդրադառնալ բոլոր հանդիպվելիք բառերին: Ուսուցիչը մեծ ուշադրություն պետք է դարձնի հատկապես չափածո գործերին, քանի որ հարանունների հիմնականում հանդիպում ենք հենց նման ստեղծագործություններում, որոնց գործածությունը պայմանավորված է լինում ոճավորման, հանգավորման նպատակով:

Այսպես՝ անցնելով **Պ. Սևակի «Հայաստան»** բանաստեղծությունը՝ բացատրել նշված բառերը.

Իմ քաղցրանուն,

Իմ քարձրանուն,

Իմ տառապաս,

Իմ փառապանձ:

Դու՝ խաղողի խչմարված վազ,

Վշտերդ՝ ջուր, ինքդ՝ ավազ:

Դու՝ կիսավեր ամբոց ու քերդ,

Մազադաթյա մատյանի թերթ:

Դու՝ ջրադագ խորունկ ձորում,

Դու՝ հորովել անուշ ծորուն:

Դու՝ մրգերի չտեմադան,

Ոսկեվազյան գինու մառան:

Դու՝ Սևանի վառվող կոհակ,

Երևանի պուրն ու խոլակ:

Արդարության ահեղ ասոլան,

Սրի պատյան,

Սիրո մատյան,

Միշտ հին ու նոր իմ Հայաստան:

**«Էրեբունի Երևան»** -ը

Մենք արյան կանչեր ունենք մեր սրտերում,

Անկատար տենչեր ունենք դեռ շատ:

Մեր կանչն առանց քեզ՝ իզուր կկորչի,

Առանց քեզ՝ մեր տար տննչն էլ կատչի:  
Քո Մասիս հորով, քո Արարս մորով,  
Մեծանաս դարով, Երևան:  
Տար է սերը՝ շեկ քարերի պես,  
Հին է սերը մեր՝ ձիգ դարերի պես:

**Ն. Մահյանի**

«Մայրցամաք»-ը  
Բլիթ-բաղարջով, հոն ու հաղարջով,  
Անճարի համար պահած պատառով,  
Իր դեղապնտի սորեկ, հաճարով:  
«Երևան»-ը՝ քնար-հնար, հող-տող, խորք-ցնորք:  
«Ուր որ նայում եմ»՝ արցունք-բարձունք, շեփոր-թավոր:

**Գ. Էմինի**

«Պատգամ»-ը  
Ամեն մի հայ՝ լեռն մի ծերպ,  
Ամեն մի հայ՝ ուրոյն մի կերպ:  
Բաժան- բաժան,  
Անմիաբան,  
Ձատված, հատված:  
Մեր դարավոր անմահ երթի  
Եվ այս ժայռին թառած բերդին:

Հարանուններ թեմային անդրադառնալու պատճառներից մեկն էլ այն է, որ 5-6-րդ դասարանի մայրենիի դասագրքերում բավականին շատ են այնպիսի վարժությունները, ինչպիսիք են՝ «Բացատրել հրավեր և հրավերք, մեղանչել և մեղա գալ, բույր և բյուր, հրձիգ և հրածիգ, ջրծաղիկ և ջրածաղիկ, հառնել և հառել, ավանդույթ և ավանդություն, շառաչյուն և շառաչուն բառերի տարբերությունները, դրանք գործածել նախադասությունների մեջ»: (4, էջ 103 և 215) Նման առաջադրանքներ կան նաև «Բառային աշխատանքներ» բաժնում: Հետևաբար, այդ առաջադրանքները կատարելիս նպատակահարմար եմ գտնում, ինչ որ չափով, դյուրմբռնելի մատուցել հարանունների գոյության մասին, նշել, որ այդպիսի բառերը հայերենում կոչվում են հարանուններ:

Այսպիսով՝ էական է, երբ աշակերտը բառերը ճիշտ է կապակցում, նախադասությունները ճիշտ կառուցում, խոսքը գեղեցիկ կազմում: Վերջինս հաջող չի ստացվի, եթե յուրացած չլինի հայոց լեզվի ողջ դասընթացը: Ուրեմն՝ չպետք է սահմանափակվել նրանով, որ կարողացել է ինչ որ չափով թեման յուրացնել տալ, նաև խթանել բառապաշարի հարստացմանը, խոսքի զարգացմանը՝ կարևորելով այն փաստը, որ մայրենի լեզվի ուսուցման կենսական պահանջներից մեկն աշակերտի խոսքի զարգացումն ու բառակազմի ընդլայնումն է: Այսպես՝ հայոց լեզվի ուսուցման ամբողջ ընթացքում, գուցա հետաբար պետք է ապահովել նաև աշակերտի բառաֆոնդի հարստացման, դրանց ճիշտ գործածման խնդիրը, քանզի այդ թեման միշտ էլ դասավանդողների՝ առանձնապես մայրենիի ուսուցիչների համար օրակարգի խնդիր է եղել:

Ինչպիսի հնարների ու մեթոդների, օրինակների ու վարժությունների օգնությամբ կարելի է հարանուններով հարստացնել աշակերտի բառապաշարը: Այս կապակցությամբ առաջարկում ենք համակարգված վարժությունների մի ամբողջ շարք:

1). Հետևյալ հարանունները գործածել նախադասությունների մեջ. մեղկ - մեղք, մոգ-մուգ, որդ-որթ, հարդ-հարթ, ոգի- հոգի, վարկ - վարք - վարգ, բույր - բյուր, կոհակ - կողակ, վճռական - վաճառական:

2). Բացատրական բառարանի միջոցով որոշել հետևյալ հարանունների իմաստները. բարկ-բարք, բանախոյս - բանախոյզ, գաղափար - կաղապար, գդալ - գթալ, գինաբբուկ -գինաբբուք, դժխեմ - դշխտ, դիտել - դիտարկել, երթ-հերթ, երկնել - երկնչել, զգացում - զգացմունք, տարագիր - տարեգիր, սրտմաշուկ - տրտմաշուք, սրդողնի-սրտդողնի և այլն:

3). Առաջադրել հարանուններով համեմված տեքստ և պահանջել գտնել դրանք ու բացատրել իմաստները:

4). Առաջադրել հարանուններ և պահանջել դրանք ենթարկել բառակազմական վերլուծության:

5). Պահանջել գեղարվեստական գրականությունից քաղել հարանուններով տեքստ և բառարանի օգնությամբ գրել դրանց իմաստները:

6). Քանի որ 6-րդ դասարանում աշակերտները դեռ ծանոթ չեն խոսքի մասերին, կարելի է տարբեր խոսքի մասերին առնչվող հարանուններով նախադասություններ կազմել և պահանջել խմբավորել դրանք, կամ պահանջել, որ աշակերտները կազմեն, օր-կ՝ վերաբերել - վերաբերվել, հրապարակել - հրատարակել, համաձայնել - համաձայնվել, պահպանել - պաշտպանել, թռչել - թրջել, հարդարանք - զարդարանք, հանցանք - զանցանք, հասկացություն - հասկացողություն,

արհեստ - արվեստ, կրկնություն - կրկնողություն, կտրիչ-կտրիճ, քաղաքային - քաղաքական, շարային - շարքային, մեղմորեն - մեղմօրոր և այլն:

7).Առաջադրված հարանունները թերևի. բառաբարդել կամ ածանցել: Թեևկուզ այդ դեպքում հարանուններ չեն ստանա, սակայն առիթ կունենան ևս մեկ անգամ շոշափելու ուղղագրական կանոնները այսպես՝

- հույզ - հուզառատ, հուզիչ, հուզվել,
- հույս - հուսաբեկ, անհույզ, հուսալ,
- վանք - վանքաշատ,
- վանկ - բազմավանկ, վանկանի, վանկատել:

8).Անծանոթ բառերի ճշգրիտ,համառոտ բացատրությունը գրանցել տալ բառատեսերերում և պահանջել անգիր սովորել:

Այժմ փորձենք ներկայացնել 5-6-րդ դասարանի մայրենիի դասագրքում զետեղված հարանուններ. բաղ - պատ, պայտ - փայտ, գետ - կետ, գայլ- քայլ, թանկ - տանկ, հարդ -հարթ, կրունկ - կռունկ, ճար- ճառ, սյուն - սույն, բույր - բյուր, գորշ - գրոշ, միաժամանակ-միառժամանակ, թրջել - թռչել, մրմռալ - մռմռալ, դաս - թաս, բառ - բար, բաղարջ-հաղարջ,անճար-հաճար,ծերպ-կերպ,հատված-գատված,երթին-բերդին,լսինդ-հինդ,լորենի-ցորենի,արցունք-բարձունք,տառը-բառը-դառը,երկին-երկիր և այլն: (5,էջ12 և 15)

### *Գրականություն*

1. Մեթոդական նամակներ, Մայրենի, 5 - 6-րդ դասարաններ, 2011-2012թթ.:
2. Աբրահամյան Ա., Ժամանակակից գրական հայերեն, Եր., 1981թ.:
3. Մարգարյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու, Եր., 1993թ.:
4. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 6, Եր.,2007թ.:
5. Գյուրջինյան Դ., Գալստյան Ա., Ալեքսանյան Թ., Մայրենի 5, Եր.,2011թ.:
6. Թամրազյան Ն., Հայոց լեզվի հարանունների ուղղագրական - բացատրական բառարան, Եր.,Ստ.,2003թ.:

Паронимы и развитие лексики учащихся (средняя школа).

**Շ.Ա.Ասրատյան**

*Резюме*

Хотя в основных школах не изучают паронимы, но учащихся 5-го и 6-го класса часто сталкиваются с паронимами в художественном тексте. Однако, близость паронимов по своему звучанию и написанию может стать причиной их неправильного, неточного употребления. Обучение учащихся различать паронимы, формировать умение использовать их в устной и письменной речи, является одной из главных задач учителей по родному языку в младших и в основных школах. Развивать умение учащихся находить паронимы в художественном тексте и в словаре, способствует пополнению словарного запаса и к повышению экспрессивности речи.

В данной статье, для учащихся 5-го и 6-го класса, даются соответствующие методы обучения паронимов, своеобразный характер упражнений - от очень простых, до сравнительно трудных.

Paronyms and the development of vocabulary of pupils (high school).

**Ts.A.Hasratyan**

*Summary*

Even though the principal schools don't study paronyms, but pupils of 5<sup>th</sup> and 6<sup>th</sup> forms often have to work with paronyms in the feature text. But nearness of paronyms by their soundness and writeness may be a matter of their wrong and not exit using.

The studing of different paronyms, help to formulate skill to use them in oral and writing speech. To help pupils to find paronyms in feature text and in the dictiinary, promote supplement of vocabulary and raise the expression of speech.

In this article the methods of studing paronyms, the exercises - from easy to comparative difficult are given.